



237

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Քիւ 28878

Փետրուար 18, 1978

Մեծայարգ
Տրթ. Նուպար Գ. Ասթարճեան
Ատենադպիր Ժիական Խորհուրդի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Պինկհամթըն, Նիւ Եորք.

Սիրելի Տրթ. Ասթարճեան,

Ստացած ենք 1978 Փետրուար 8 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ Տրթ. Բօպորթ Պաղտասարեանի ատենապետութեամբ զուամրուած
համայնքիդ ճարեկան Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի
երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը,
կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժիական Ժողովը տեղի գլնեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիական
Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժիական Խորհուրդի նորընտիր
Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու վարչութեանց
ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ամենուղ յաջող
եւ արդիււաւոր զործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ
եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Նշան Բէլոյեան
Ճան Պաղտասարեան
Մայքըլ Մեծիկեան